Վարչական վարույթ հարուցելու մասին ծանուցագիրը, որն ուղարկվել էր փոստային առաքմամբ 2023 թվականի սեպտեմբերի 11-ին /հիմք՝ «Հայփոստ» ՓԲ ընկերության կողմից 2023 թվականի սեպտեմբերի 11–ին տրված N LO111209438AM ստացականը/ հանձնվել է ստացողին նշված բեռնային համարով առաքանու էլեկտրոնային տվյալների համաձայն հոկտեմբերի 11-ին, ուստի ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 49–րդ հոդվածի 3–րդ մասի 2–րդ պարբերությամբ, համաձայն որի՝ «Սույն հոդվածի 1-ին մասի «բ» և «գ» կետերով, ինչպես նաև 2-րդ մասով նախատեսված դեպքերում վարչական վարույթը վերսկսվում է դրա կասեցման հիմք դարձած հանգամանքները վերանալուց հետո, բայց ոչ ուշ, քան կասեցման մասին որոշում ընդունելու օրվանից հետո 60 օրը լրանալը», 2023 թվականի սեպտեմբերի 11–ին հարուցված վարչական վարույթը համարել վերսկսված, քանի որ դրա կասեցման համար հիմք հանդիսացած հանգամանքը վերացել է:

Իրավախախտողները, լինելով պատշաճ ծանուցված, ներկայացել են վարչական վարույթի լսմանը: Լսման ընթացքում պարզ դարձավ, որ Արաքս համայնքի Ապագա գյուղի վարչական տարածքում գտնվող 04-012-0204-0007 կադաստրային ծածկագրով հողամասը չի օգտագործվում նրանց կողմից ոչ նպատակային նշանակությամբ, նախկինում օտարվել է և սեփականության իրավունքով չի պատկանում այդ անձանց:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» ենթակետով, հիմք ընդունելով Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի առաջատար մասնագետի կողմից 2023 թվականի հոկտեմբերի 13-ին ներկայացված զեկուցագիրը.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հասան Հասոյանի, Գյուլիշա Հասոյանի, Զինա Հասոյանի, Սուսաննա Հասոյանի, Խասե Հասոյանի, Հերիքնազ Հասոյանի, Աննա Հասոյանի եվ Մրազ Հասոյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթը կարճել:
2. Վարչական վարույթը կարճելու մասին որոշումը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված ընդհանուր կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից՝ համայնքապետարանի տեղեկագրերում հրապարակելու միջոցով:

**ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2023 թվականի հոկտեմբերի 16
Արաքս համայնք

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 093554477
araqs.hamaynq@gmail.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 հոկտեմբերի 2023 թվականի N 1078-Ա

## ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ջրառատ գյուղի վարչական տարածքում գտնվող՝ Դերենիկ Հայրապետի Այվազյանին սեփականության իրավունքով պատկանող 04-085-0030-0019 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արաքս համայնք, գյուղ Ջրառատ,Մեծամորի խճուղի, 19 հասցե:
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ

2023 թվականի հոկտեմբերի 16
Արաքս համայնք

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, Ա. Խաչատրյան 1, araqs.hamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

## ՈՐՈՇՈՒՄ

16 Հոկտեմբեր 2023 թվական N1079-Ա

## ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, Արաքս համայնքի Ապագա գյուղի սեփականությունը հանդիսացող 0.15 հա հողամասի /ծածկագիր՝ 04-012-0027 նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ ընդհանուր օգտագործման/ պետական տուրքի և պետական գրանցման համար գումար փոխանցելու նպատակով:

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2023 թվականի բյուջեի 01.1.1-ի (Արաքսի համայնքապետարան) 4823 հոդվածից 1.000 (մեկ հազար) ՀՀ դրամ փոխանցել հ/հ 900005016176 հաշվեհամարին:
2. ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2023 թվականի բյուջեի 01.1.1-ի (Արաքսի համայնքապետարան) 4823 հոդվածից 25.000 (քսանհինգ հազար) ՀՀ դրամ փոխանցել հ/հ 900013220018 հաշվեհամարին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2023 թվականի հոկտեմբեր 16
Արաքս համայնք

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, Ա. Խաչատրյան 1, araqs.hamaynq@gmail.com, հեռ՝ (093)554477

## ՈՐՈՇՈՒՄ

**16 հոկտեմբերի 2023 թվական N 1080-Ա**

## ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՋՐԱՌԱՏ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՆՈՒՇ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 31–րդ հոդվածի 9–րդ մասով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 161-րդ, 163–րդ և 164–րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11–ի N 1384-Ն որոշմամբ հաստատված հավելված N 1-ի 18.1–րդ կետը և Վանուշ Հայրապետյանի 2023 թվականի հոկտեմբերի 16–ի դիմումը.

**Որոշում եմ՝**

1. Արաքս համայնքի Ջրառատ գյուղի վարչական ղեկավար Վանուշ Հայրապետյանին տրամադրել 2023 թվականի ամենամյա արձակուրդի մի մասը՝ 10/տասը/ աշխատանքային օր տևողությամբ, 2023 թվականի հոկտեմբերի 19–ից նոյեմբերի 1-ը ներառյալ :
2. Ջրառատ գյուղի վարչական ղեկավարի պարտականությունները ժամանակավորապես կատարող նշանակել Արաքսի համայնքապետարանի

աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Սարգիս Նահապետյանին:

3. Վանուշ Հայրապետյանին աշխատանքի մեջ համարել 2023 թվականի նոյեմբերի 2-ից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2023 թվականի հոկտեմբերի 16

Արաքս համայնք

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 093554477
araqs.hamaynq@gmail.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
**16 հոկտեմբերի 2023թվականի N 1081-Ա**

## ՍԵԴԱ ՕՄՐԻ ԽՈՒԴՈՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N1023-Ն և 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշումներով, նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք և հիմք ընդունելով սեփականատեր Սեդա Օմրի Խուդոյանի լիազորված անձ՝ Թամո Անդոյի Ամոյանի 2023 թվականի հոկտեմբերի 10-ի դիմումը.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի բնակիչ Սեդա Օմրի Խուդոյանին սեփականության իրավունքով պատկանող /04-013-0048-0016/ ծածկագրով տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված 116.5 քմ արտաքին մակերեսով բնակելի տունը, 14.3 քմ արտաքին մակերեսով պարիսպը, համաձայն «Աստղիկ Մանուկյան » Ա/Ձ-ի կողմից տրված շինությունների և հողամասի հատակագծերի և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 2023ZZLZJ3:
2. Ինքնակամ կառույցների օրինականացման համար վճարը կազմում է բնակելի շինությունների 1քմ-ի համար՝ 1028 ՀՀ դրամ, օժանդակ շինությունների 1քմ-ի համար 616.8 ՀՀ դրամ, 1028*116.5քմ=119762 /մեկ հարյուր տասնինը հազար յոթ հարյուր վաթսուներկու/ ՀՀ դրամ, 616.8*14.3քմ=8820 /ութ հազար ութ հարյուր քսան/ ՀՀ դրամ: Ընդամենը՝ 119762+8820=128582 /մեկ հարյուր քսանութ հազար հինգ հարյուր ութսուներկու/ ՀՀ դրամ:

3.Ինքնակամ կառուցված շենք-շինությունների օրինականացման հաշվարկված վճարը՝ 128582 ՀՀ դրամ գումարը պետք է վճարվի Առատաշեն գյուղի N900325153162 հաշվեհամարին:

4. Սույն որոշման ընդունման օրվանից 60-օրվա ընթացքում օրինականացման համար սահմանված վճարը չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած :

5. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի միասնական ստորաբաժանումում:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՂԱՋԱՐ ՂԱՋԱՐՅԱՆ**

2023 թվականի հոկտեմբերի 16
Արաքս համայնք

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 093554477
araqs.hamaynq@gmail.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 հոկտեմբերի 2023 թվականի N 1082-Ա

## ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Առատաշեն գյուղի վարչական տարածքում գտնվող՝ Գառնիկ Սիմոնյանին սեփականության իրավունքով պատկանող 04-013-0033-0058 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արաքս համայնք, գյուղ Առատաշեն, Արցախի փողոց, 50 հասցե:
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ

2023 թվականի հոկտեմբերի 17
Արաքս համայքն

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 093554477
araqs.hamaynq@gmail.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 հոկտեմբերի 2023 թվականի N 1083-Ա

## ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ակնաշեն գյուղի վարչական տարածքում գտնվող՝ Կառլեն Պողոսյանին սեփականության իրավունքով պատկանող 04-005-0010-0004 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արաքս համայնք, գյուղ Ակնաշեն, 4-րդ փողոց, 42 հասցե:
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ**

2023 թվականի հոկտեմբերի 17
Արաքս համայնք

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 093554477
araqs.hamaynq@gmail.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 հոկտեմբերի 2023 թվականի N 1084-Ա

## ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով.

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Արաքս (Էջմիածնի շրջ.) գյուղի վարչական տարածքում գտնվող՝ Ղազար Դանիելյանին սեփականության իրավունքով պատկանող 04-017-0014-0005 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արաքս համայնք, գյուղ Արաքս (Էջմիածնի շրջ.), Ալիխանյան եղբայրների փողոց, 10 հասցե:
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ**

2023 թվականի հոկտեմբերի 17
Արաքս համայնք

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, Ա. Խաչատրյան 1, araqs.hamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

## ՈՐՈՇՈՒՄ

**17 հոկտեմբերի 2023 թվական N 1085-Ա**

## ԿԱՍԵՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ՎԵՐՍԿՍԵԼՈՒ ԵՎ ԳՆԵԼ ԽՈՍՏԵՂՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավար Ղազար Ղազարյանս ուսումնասիրելով Գնել Խոստեղյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթի գործը ***պարզեցի***՝

ՀՀ Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի կողմից Գնել Խոստեղյանի / հասցե՝ ՀՀ, Արմավիրի մարզ, Արաքս համայնք, գ. Ապագա, 17 փ., 31 տ./ նկատմամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով հարուցվել է վարչական վարույթ, քանի որ իր կողմից ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ապագա գյուղի վարչական տարածքում գտնվող 04-012-0131-0004 կադաստրային ծածկագրերով հողամասն օգտագործվում է ոչ նպատակային նշանակությամբ, այն է իրականացվում է ձկնաբուծություն:

Անձի կողմից իրականացվել է ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին և 2-րդ պարբերություններով սահմանված խախտումներ, որոնք առաջացնում են տուգանքի նշանակումներ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի և հինսապատիկի չափերով:

Վարույթի հարուցման համար հիմք էր հանդիսացել ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավարի կողմից 2023 թվականի հունվարի 9-ի N 4-Ա

կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի կողմից 2023 թվականի օգոստոսի 22-ին կազմված արձանագրությունը:

Վարչական վարույթ հարուցելու մասին ծանուցագիրը Գնել Խոստեղյանին ուղարկվել էր փոստային առաքմամբ 2023 թվականի օգոստոսի 30-ին /հիմք՝ «Հայփոստ» ՓԲ ընկերության կողմից 2023 թվականի օգոստոսի 30–ին տրված N LO111042840AM ստացականը/, սակայն նշված բեռնային համարով առաքանու էլեկտրոնային տվյալների համաձայն՝ Գնել Խոստեղյանն առաքանին չէր ստացել:

Վերոգրյալից և վարչական վարույթի շրջանակներում լսում իրականացնելու անհրաժեշտությունից ելնելով, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1–ին մասի 24-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 49-րդ հոդվածի 2–րդ մասի 2-րդ պարբերությամբ, որի համաձայն՝ «Վարչական վարույթը կարող է կասեցվել նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում:», «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի պահանջի կատարումն ապահովելու նպատակով, Արաքս համայնքի ղեկավարի 2023 թվականի սեպտեմբերի 29-ի N 1014-Ա որոշմամբ Գնել Խոստեղյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթը կասեցվել էր՝ մինչև վարչական վարույթ հարուցելու մասին ծանուցմամբ սահմանված լսում իրականացնելու ժամկետի ավարտը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածի համաձայն՝ իրավախախտողը պատշաճ ծանուցված էր վարչական վարույթի անցկացման վայրի և ժամանակի մասին / ծանուցման հիմք՝ Վարչական վարույթ հարուցելու մասին ծանուցագիրը և վարչական վարույթը կասեցնելու մասին որոշումը gevorg.khachatryan1991@gmail.com էլեկտրոնային հասցեին ուղարկելը հավաստող ապացույց և վերոնշյալ էլեկտրոնային փոստի հասցեից 2023 թվականի հոկտեմբերի 6–ին Արաքսի համայնքապետարանի պաշտոնական էլեկտրանային հասցեին ուղղված պատասխան նամակը/, ուստի ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 49–րդ հոդվածի 3–րդ մասի 2–րդ պարբերությամբ, համաձայն որի՝ «Սույն հոդվածի 1-ին մասի «բ» և «գ» կետերով, ինչպես նաև 2-րդ մասով նախատեսված դեպքերում վարչական վարույթը վերսկսվում է դրա կասեցման հիմք դարձած հանգամանքները վերանալուց հետո, բայց ոչ ուշ, քան կասեցման մասին որոշում ընդունելու օրվանից հետո 60 օրը լրանալը», 2023

թվականի օգոստոսի 29-ին հարուցված վարչական վարույթը համարել վերսկսված, քանի որ դրա կասեցման համար հիմք հանդիսացած հանգամանքը վերացել է:

Իրավախախտողը, լինելով պատշաճ ծանուցված, ներկայացել է վարույթի լսմանը, ինչի արդյունքում պարզ է դարձել, որ Արաքս համայնքի Ապագա գյուղի վարչական տարածքում գտնվող 04-012-0131-0004 կադաստրային ծածկագրով հողամասը իր կողմից չի օգտագործվում ոչ նպատակային նշանակությամբ, մինչդեռ կատարվել է գործառնական նշանակության և հողատեսքի ինքնակամ փոփոխում:

**Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.**

ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավարի 2023 թվականի հունվարի 9-ի N 4-Ա կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի կողմից 2023 թվականի օգոստոսի 22-ին կազմված արձանագրությունը:

Արաքս համայնքի ղեկավարի 2023 թվականի օգոստոսի 29-ի «Վարչական վարույթ հարուցելու մասին» ծանուցագիրը:

Արաքս համայնքի ղեկավարի 2023 թվականի սեպտեմբերի 29-ի «Գնել Խոստեղյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթը կասեցնելու մասին» N 1014-Ա որոշումը :

ՀՀ Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի առաջատար մասնագետի 2023 թվականի հոկտեմբերի 16-ի զեկուցագիրը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Գնել Խոստեղյանին պատկանող ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ապագա գյուղի վարչական տարածքում գտնվող 04-012-0131-0004 կադաստրային ծածկագրով հողամասը չի օգտագործվում է ոչ նպատակային նշանակությամբ, մինչդեռ կատարվել է գործառնական նշանակության և հողատեսքի ինքնակամ փոփոխում:

**Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43–րդ հոդվածի 1–ին մասի 4–րդ և 5–րդ կետերի՝ համայնքի ղեկավարը օրենքով սահմանված կարգով վերահսկողություն է իրականացնում համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային օգտագործման, հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ: Օրենքով սահմանված դեպքերում և կարգով կանխարգելում, կասեցնում և վերացնում է ապօրինի հողօգտագործումները:

Համաձայն ՀՀ հողային օրենսգրքի 8–րդ հոդվածի 1–ին մասի, 9–րդ հոդվածի 1–ին և 2–րդ մասերի պահանջների՝ հողամասի թույլատրված օգտագործումը հողամասի օգտագործումն է դրա նպատակային և գործառնական նշանակությամբ, ներառյալ՝ սահմանված իրավունքները և սահմանափակումները:Հողամասի թույլատրված օգտագործումը սահմանվում է նորմատիվ իրավական ակտերի, հողերի օգտագործման սխեմաների, հողաշինարարական այլ փաստաթղթերի, գլխավոր հատակագծերի ու քաղաքաշինական գոտիավորման նախագծերի հիման վրա: Գյուղատնտեսական նշանակության հողեր են համարվում գյուղատնտեսական կարիքների համար առանձնացված և գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով գյուղատնտեսական մշակաբույսերի մշակման, բազմամյա տնկարկների հիմնման, խոտհնձի, անասունների արածեցման, ինչպես նաև գյուղատնտեսական այլ նպատակների համար նախատեսված հողատեսքերը:Գյուղատնտեսական նշանակության հողերը, ըստ հողատեսքերի, բաժանվում են՝ վարելահողերի, բազմամյա տնկարկների, խոտհարքների, արոտավայրերի, այլ հողատեսքերի: Նույն օրենքի 43–րդ հոդվածի 2–րդ մասի համաձայն՝ համայնքի ղեկավարը կանխարգելում, կասեցնում և վերացնում է ապօրինի հողօգտագործումը համայնքի վարչական սահմաններում, օրենքով սահմանված դեպքերում ու կարգով հողային օրենսդրության պահանջները խախտողների նկատմամբ կիրառում է վարչական տույժեր, ինչպես նաև իրավասու մարմիններ է ներկայացնում հաղորդումներ՝ իրավախախտում թույլ տված անձանց՝ օրենքով սահմանված պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ:

Տվյալ պարագայում Գնել Խոստեղյանի կողմից ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ապագա գյուղի վարչական տարածքում գտնվող իրեն սեփականության իրավունքով պատկանող 04-012-0131-0004 կադաստրային ծածկագրով հողամասի գործառնական նշանակությունը և հողատեսքը ինքնակամ փոփոխվել են :

Արդյունքում տեղի է ունեցել ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 54-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ սահմանված խախտում, այն է՝ հողամասերի գործառնական նշանակությունը և հողատեսքերի ինքնակամ փոփոխելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով,

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով, 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 5-րդ կետերով, ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 54-րդ հոդվածի 2-րդ պարբերությունով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 8-րդ և 9-րդ հոդվածներով, 43-րդ հոդվածի 2-րդ մասով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի առաջատար մասնագետի կողմից ներկայացված զեկուցագիրը.

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. Իրավախախտող Գնել Խոստեղյանի նկատմամբ նշանակել վարչական տուգանք՝ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ապագա գյուղի վարչական տարածքում գտնվող 04-012-0131-0004 կադաստրային ծածկագրով հողամասի գործառնական նշանակությունը և հողատեսքը ինքնակամ փոփոխելու համար՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով՝ 50.000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ:
2. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն՝ տուգանքը պետք է վճարվի սույն որոշումն իրավախախտում կատարողի կողմից իրազեկվելուց ոչ ուշ քան

տասնհինգ օրվա ընթացքում՝ ֆինանսների նախարարության 900325165232 հաշվեհամարին, ստացող՝ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնք:

3. Իրավախախտող Գնել Խոստեղյանին տալ պարտադիր ցուցում՝ երկամսյա ժամկետում իրականացնել հողամասերի նպատակային և գործառնական նշանակության փոփոխմանն ուղղված աշխատանքներ, հակառակ պարագայում հողամասը բերել նախնական տեսքին և համապատասխանեցնել նպատակային և գործառնական նշանակությանը:
4. Սույն որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ, 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
5. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից՝ Համայնքապետարանի և Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում:

**ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2023 թվականի հոկտեմբերի 17
Արաքս համայնք

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 093554477
araqs.hamaynq@gmail.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 հոկտեմբերի 2023 թվականի N 1086-Ա

## ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35–րդ հոդվածի 1–ին մասի 22–րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29–ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50–րդ կետով.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ապագա գյուղի վարչական տարածքում գտնվող՝ 04-012-0025-0005 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արաքս համայնք, գյուղ Ապագա, Էջմիածնի խճուղի, 2/1 հասցե:
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՂԱՋԱՐ ՂԱՋԱՐՅԱՆ**

2023 թվականի հոկտեմբերի 17
Արաքս համայնք

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 093554477
araqs.hamaynq@gmail.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 հոկտեմբերի 2023 թվականի N 1087-Ա

## ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով.

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ապագա գյուղի վարչական տարածքում գտնվող՝ Կարեն Մարտիրոսյանին սեփականության իրավունքով պատկանող 04-012-0040-0001 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արաքս համայնք, գյուղ Ապագա, 28-րդ փողոց, 2 հասցե:

2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՂԱՋԱՐ ՂԱՋԱՐՅԱՆ**

2023 թվականի հոկտեմբերի 17
Արաքս համայնք

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, Ա. Խաչատրյան 1, araqs.hamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

## ՈՐՈՇՈՒՄ

**17 հոկտեմբերի 2023 թվական N1088-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 1014-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավարի 2023 թվականի սեպտեմբերի 29-ի «Գնել Խոստեղյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթը կասեցնելու մասին» N 1014-Ա որոշման մեջ կիրառված «04-012-0131-0002» թվերը փոխարինել «04-012-0131-0004» թվերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ղ. ՂԱՋԱՐՅԱՆ**

2023 թվականի հոկտեմբերի 17
Արաքս համայնք

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 093554477
araqs.hamaynq@gmail.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
**17 հոկտեմբերի 2023թվականի N 1089-Ա**

## ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Հրաչյա Համբարձումի Օհանյանը /ծնվ. 1960թ./ դիմել է Արաքսի համայնքապետարան՝ Առատաշեն գյուղի Հ.Շիրազի փողոց 17 հասցեում գտնվող, իրեն պատկանող /ըստ օրենքի ժառանգության վկայագրերի՝ 2017թ-ի թիվ 3458,թիվ 3459 սեղանամատյանի և 2005թ-ի նոյեմբերի 8-ի թիվ 2113091 սեփականության վկայականի/ 0.222 հա օրինական հողամասի և բնակելի տան, բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ իրավունքները վերականգնելու խնդրանքով:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, հաշվի առնելով, որ բնակելի տունը և օժանդակ շենք շինությունները կառուցվել են մինչև 15.05.2001թ., հողամասը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Վերականգնել Արմավիրի մարզի Արաքս համայնքի Առատաշեն գյուղի Հ.Շիրազի փողոց 17 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Հրաչյա Համբարձումի Օհանյանի /ծնվ. 1960թ./ գույքային իրավունքները՝ ճանաչել նրա սեփականության իրավունքը 0,222հա օրինական հողամասի և բնակելի տան, բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ՝ /բնակելի տուն(կիսանկուղ)՝ 76,1քմ, բնակելի տուն՝ 18,6քմ.բնակելի տուն՝ 80,0քմ,բնակելի տուն՝ 50,6քմ, բնակելի տուն՝ 13,4քմ, ծածկած մուտք՝ 9,21քմ, ծածկած մուտք՝ 52,4քմ, ծածկ՝ 0,9քմ, կաթսայատուն՝

4,4քմ/: Կառույցները չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ:
2.Շենք-շինությունների մակերեսները ենթական են ճշտման համապատասխան որակավորում ստացած անձի կողմից:
3.Առաջարկել ՀՀ ԿԱԱԳԿՊԿ համապատասխան մարզային ստորաբաժանմանը գրանցել Հրաչյա Համբարձումի Օհանյանի /ծնվ. 1960թ./ սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի, հողամասում առկա բնակելի տան, բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի գրանցման վկայական:
4.Բնակելի տանը տալ Հայաստանի Հանրապետություն, Արաքս համայնք, գյուղ Առատաշեն, Հ.Շիրազի փողոց թիվ 17 հասցեն:
5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ**

2023 թվականի հոկտեմբերի 17
Արաքս համայնք

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, Ա. Խաչատրյան 1, araqs.hamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

## ՈՐՈՇՈՒՄ

17 հոկտեմբերի 2023 թվական N1090-Ա

### ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, Արաքս համայնքի 2023 թվականի 3-րդ եռամսյակի բնապահպանական հարկի համար.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2023 թվականի բյուջեի 01.1.1-ի (Արաքսի համայնքապետարան) 4823 հոդվածից հատկացնել 49.953 (քառասունինը հազար ինը հարյուր հիսուներեք) ՀՀ դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2023 թվականի հոկտեմբերի 17
Արաքս համայնք

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 093554477
araqs.hamaynq@gmail.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 հոկտեմբերի 2023 թվականի N 1100-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետով, ՀՀ Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով ՀՀ Արմավիրի մարզի,Արաքս համայնքի, Ակնաշեն գյուղի բնակիչ՝ Էվելինա Խաչիյանի դիմումը իրեն պատկանող անշարժ գույքը բաժանելու մասին /հիմք՝ <<Կարեն Մաչանյան>> ԱՁ-ի /վկայական N 0244/ կողմից կատարված չափագրությունը.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ակնաշեն գյուղի վարչական տարածքում գտնվող Էվելինա Խաչիյանին պատկանող 04-005-0028-0014 կադաստրային ծածկագրով անշարժ գույքից առանձնացված 815,3 քմ մակերեսով մասին տրամադրել ՀՀ Արմավիրի մարզ,Արաքս համայնք, գյուղ Ակնաշեն,Հ. Բաղրամյան փողոց, 15/1 հասցե, 1630,7 քմ մակերեսով մասին տրամադրել ՀՀ Արմավիրի մարզ, Արաքս համայնք,գյուղ Ակնաշեն, Բաղրամյան փողոց, 15 հասցե:

2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ**

2023 թվականի հոկտեմբերի 18
Արաքս համայնք

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 093554477
aqs.hamaynq@gmail.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 հոկտեմբերի 2023 թվականի N 1101-Ա

## ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35–րդ հոդվածի 1–ին մասի 22–րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29–ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50–րդ կետով.

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Առատաշեն գյուղի վարչական տարածքում գտնվող՝ Սուրեն Ջալկոյի Հասոյանին սեփականության իրավունքով պատկանող 04-013-065-015 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արաքս համայնք, գյուղ Առատաշեն, Մ. Մաշտոցի փողոց, 39 հասցե:
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ**

2023 թվականի հոկտեմբերի 18
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 093554477
araqs.hamaynq@gmail.com

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**18 հոկտեմբերի 2023թվականի N 1102-Ա**

## ԴԵՐԵՆԻԿ ԱՐԱՅԻԿԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N1023-Ն և 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշումներով, նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք և հիմք ընդունելով սեփականատեր Արաքս համայնքի Արտիմետ գյուղի բնակիչ Դերենիկ Արայիկի Աբրահամյանի 2023 թվականի հոկտեմբերի 10-ի դիմումը.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Արտիմետ գյուղի բնակիչ Դերենիկ Արայիկի Աբրահամյանին սեփականության իրավունքով պատկանող /04-023-0026-0004/ ծածկագրով տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված 47.9 քմ արտաքին մակերեսով բնակելի տուն նկուղը, 7.2 քմ արտաքին մակերեսով ծածկը, 2.5քմ արտաքին մակերեսով զուգարանը, 2.3քմ արտաքին մակերեսով պարիսպը համաձայն «Սևան Թովմասյան » Ա/Ձ-ի կողմից տրված շինությունների և հողամասի հատակագծերի և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 2023PFUVRN:
2. Ինքնակամ կառույցների օրինականացման համար վճարը կազմում է բնակելի շինությունների 1քմ-ի համար՝ 1209 Հայաստանի Հանրապետության դրամ, օժանդակ շինությունների 1քմ-ի համար 725.4 ՀՀ դրամ, 1209*47.9քմ=57911 /հիսունյոթ հազար ինը հարյուր տասնմեկ/ Հայաստանի Հանրապետության դրամ, 725.4*12քմ=8705 /ութ հազար յոթ հարյուր հինգ/ Հայաստանի Հանրապետության դրամ: Ընդամենը՝

57911+8705=66616 /վաթսունվեց հազար վեց հարյուր տասնվեց/ Հայաստանի Հանրապետության դրամ:

3.Ինքնակամ կառուցված շենք-շինությունների օրինականացման հաշվարկված վճարը՝ 66616 Հայաստանի Հանրապետության դրամ գումարը պետք է վճարվի Արտիմետ գյուղի N900325154103 հաշվեհամարին:

4. Սույն որոշման ընդունման օրվանից 60-օրվա ընթացքում օրինականացման համար սահմանված վճարը չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

5. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի միասնական ստորաբաժանումում:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ**

2023 թվականի հոկտեմբերի 18

Արաքս համայնք

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 093554477
araqs.hamaynq@gmail.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 հոկտեմբերի 2023 թվականի N 1103-Ա

## ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35–րդ հոդվածի 1–ին մասի 22–րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29–ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50–րդ կետով.

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Արտիմետ գյուղի վարչական տարածքում գտնվող՝ Փայլակ Միրանի Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող 04-023-0021-0003 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արաքս համայնք, գյուղ Արտիմետ, Ռաֆֆու փողոց, 6 հասցե:
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ**

2023 թվականի հոկտեմբերի 18
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 093554477
araqs.hamaynq@gmail.com

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**19 հոկտեմբերի 2023թվականի N 1104-Ա**

## ԱՐՄԵՆ ՈՒՍՈՒԲԻ ՔԱԼԱՇՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N1023-Ն և 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշումներով, նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք և հիմք ընդունելով Գայ գյուղի բնակիչ Արմեն Ուսուբի Քալաշյանի 2023 թվականի հոկտեմբերի 16-ի դիմումը.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Գայ գյուղի բնակիչ Արմեն Ուսուբի Քալաշյանին, Չիչակ Աջոյի Քալաշյանին, Գյավազ Ուսուբի Քալաշյանին, Զինե Ուսուբի Քալաշյանին, Չինար Ուսուբի Քալաշյանին սեփականության իրավունքով պատկանող /04-033-0017-0013/ ծածկագրով տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված 221,7քմ արտաքին մակերեսով բնակելի տունը, 0,8քմ մակերեսով պարիսպը՝ համաձայն «Սևան Թովմասյան» Ա/Ձ-ի կողմից տրված շինությունների և հողամասի հատակագծերի և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 2023EQGHAF:
2. Ինքնակամ կառույցների օրինականացման համար վճարը կազմում է բնակելի նշանակության շինությունների 1քմ-ի համար 1422 Հայաստանի Հանրապետության դրամ, օժանդակ շինությունների 1քմ-ի համար 853,2 Հայաստանի Հանրապետության դրամ.

1422*221,7քմ=315257 /երեք հարյուր տասնհինգ հազար երկու հարյուր հիսունյոթ/ Հայաստանի Հանրապետության դրամ, 853,2*0,8քմ=683 /վեց հարյուր ուսուներեք/Հայաստանի Հանրապետության դրամ: Ընդամենը՝ 315257+683=315940 /երեք հարյուր տասնհինգ հազար ինը հարյուր քառասուն/ Հայաստանի Հանրապետության դրամ:

3.Ինքնակամ կառուցված շենք-շինության օրինականացման համար հաշվարկված վճարը՝ 315940 Հայաստանի Հանրապետության դրամ գումարը պետք է վճարվի Գայ գյուղի N900325165158 հաշվեհամարին:

4.Սույն որոշման ընդունման օրվանից 60-օրվա ընթացքում օրինականացնելու համար սահմանված վճարը չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

5.Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ**

2023 թվականի հոկտեմբերի 18
Արաքս համայնք

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 093554477
araqs.hamaynq@gmail.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**19 հոկտեմբերի 2023 թվականի N 1105-Ա**

## ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ գլխի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի ու Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման համակարգող նախարարի 29.08.2006թ. թիվ 13-Ն հրամանի պահանջներով և հիմք ընդունելով 12.07.2023 թ.-ի Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքապետարանի աշխատակազմի մրցութային հանձնաժողովի ձևավորման նպատակով հատուկ ծրագրով ընտրված հանձնաժողովի անդամների ցանկը.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքապետարանի աշխատակազմում համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար մրցութային հանձնաժողովի կազմը, համաձայն սույն որոշման հավելվածի:
2. Սահմանել, որ համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար մրցույթը անցկացվում է ՀՀ կառավարության լիազորված պետական կառավարման մարմնի կողմից հաստատված կարգի համաձայն:

3. Հանձնաժողովի նիստերի տեխնիկական սպասարկման իրականացման համար լիազորված անձ ճանաչել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության, անձնակազմի կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետին Մարիա Ազատյանին, որը պարտավորվում է մասնակիցներին բացատրել թեստավորման անցկացման հետ կապված տեխնիկական հարցերը, արձանագրել և հանձաժողովի անդամների հետ միասին ստորագրել նիստերի արձանագրությունները:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՂԱՋԱՐ ՂԱՋԱՐՅԱՆ**

2023 թ. հոկտեմբերի 19
Արաքս համայնք

ՀԱՎԵԼՎԱԾ

Հաստատված է ՀՀ Արմավիրի մարզի
Արաքս համայնքի ղեկավարի
19 հոկտեմբեր 2023թ.-ի
N 1105-Ա որոշմամբ

ԿԱԶՄ

**Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքապետարանի աշխատակազմում համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար մրցութային հանձնաժողովի**

| Հ Հ | Ազգանուն, անուն | Զբաղեցրած պաշտոնը | Որ կազմակերպությունն է ներկայացնում |
|---|---|---|---|
| 1 | Աշոտ Գվիդոնի Հովհաննիսյան | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի |
| 2 | Գասպար Հայկազի Հովհաննիսյան | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր ճարտարագետ-շինարար | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի |
| 3 | Միսակ Գագիկի Միսակյան | Արաքս համայնքի ղեկավարի օգնական | Արաքսի համայնքապետարան |
| 4 | Պետրոս Արամայիսի Ավագյան | Արաքս համայնքի ղեկավարի տեղակալ | Արաքսի համայնքապետարան |
| 5 | Առաքելյան Արմեն Հրանտի | Ավագանի | Արաքս համայնքի ավագանի |

| | | | |
|---|---|---|---|
| 6 | Գասպար Շահենի Եղիազարյան | Արաքս համայնքի Մեծամոր գյուղի դպրոցի տնօրեն | Գիտական և ուսումնական հաստատության ներկայացուցիչ |

**ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2023 թվականի հոկտեմբեր 19
Արաքս համայնք

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 093554477
araqs.hamaynq@gmail.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 հոկտեմբերի 2023 թվականի N 1106-Ա

## ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով.

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Գայ գյուղի վարչական տարածքում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող 04-033-0015-0008 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արաքս համայնք, գյուղ Գայ, 15-րդ փողոց, 13 հասցե:

2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ**

2023 թվականի հոկտեմբերի 19
Արաքս համայք

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 093554477
araqs.hamaynq@gmail.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 հոկտեմբերի 2023 թվականի N 1107-Ա

## ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35–րդ հոդվածի 1–ին մասի 22–րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29–ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50–րդ կետով.

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Գայ գյուղի վարչական տարածքում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող 04-033-0015-0009 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արաքս համայնք, գյուղ Գայ, 15-րդ փողոց, 11 հասցե:
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ**

2023 թվականի հոկտեմբերի 19
Արաքս համայնք

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 093554477
araqs.hamaynq@gmail.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 հոկտեմբերի 2023 թվականի N 1108-Ա

## ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35–րդ հոդվածի 1–ին մասի 22–րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29–ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50–րդ կետով.

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ջրառատ գյուղի վարչական տարածքում գտնվող՝ Արման Ագիթի Իսաևին սեփականության իրավունքով պատկանող 04-085-0056-0018 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արաքս համայնք, գյուղ Ջրառատ, Ա. Իսահակյան փողոց, 83 հասցե:
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ**

2023 թվականի հոկտեմբերի 19
Արաքս համայքն